

7655

891.99

9-13

2470

913

~~W^e 30/6/8~~

Madras Avenue



2003

891.99
4-13

ՀԵՂԻՆԵԿՈՒԹԻՒՆ ԳԵԳԻԿԻ

4398

~~3068~~

~~15068~~

„ԱՆՄԵՂ ԶՈՅԵՐ“⁶⁶

(Հայ-սփյուռքի ընդհարումներից Վարսեղայում)

14860

3375

Գրքերգրան
Ռ. Ս. ՍԱՐԴԱՍ. ԸՆԿ.
25. V. 1911
Библиот.-Читальн.
Бак. Арм. Челов. О-ва
1908

Տպարան „ԱՐՄՍԱԶԴ“ Բագու.

ԱՆՄԵՂ ԶՈՋԵՐ

Հայ-քրական ընդհարումներից մեկ պատկեր էլ Շուշուայ Զարդանաշեն գիւղում տեղի ունեցած այս դեպքն է:

1905 թուի նոյեմբերի 20-ն էր, երբ ես թողնելով Թոփաին, ճանապարհ ընկայ դէպի հայրենիք, Թոփաիի մի քանի արժանաւոր հոգևորականների և յարգելի աղաների աջակցութեամբ: Երբ հասայ Փանձակու կայարանը, իջայ պոեզդից և կամենում էի քաղաք գնալ և այնտեղից ընկերներ ձարելով ճանապարհ ընկնիլ դէպի Շուշի: Բայց շուտով համոզուեցայ, որ իմ մտքերն ինձ խաբեցին: Քաղաք մտնելն բոլորովին անհնարին բան էր. ուստի մի քանի օր անցկացրի Արզումանեանցի բամբակի դործարանում: Յետոյ մէկ կերպ զօրքի օգնութեամբ կարողացանք անցնել Փանձակու թուրքերի միջով հայոց թաղը: Բայց թէ ինչ գրութեան մէջ էինք այդ արիւնարբու գազաններ-

ըի միջով անցկենալիս, այդ միայն Աստուած գիտէ՝ երեք օր մնալով Գանձակ, կամեցայ մի տեղեկուծիւն իմանալ. պատահեցայ Աղբուլաղ գիւղացի Իվան (Ջէյրան) Բաղալեանցին, արհեստով որմնադիր: Նա սկսեց մանրամասն պատմել Գանձակի աղէտը այսպէս:

Գանձակի գաւառական կոմիտէն առաջարկեց, որ Շէյթան-բազարի հայ բնակիչները դուրս գան այն տեղից, որ վտանգից ազատուեն, այն պայմանով, որ արհեստաւորները դուրս գան մինչև Նոյեմբերի վերջը, իսկ վաճառականները մինչև յունվարի սկիզբը:¹⁾ Թէ ինչո՞ւ համար էր կոմիտէի այդ առաջարկուծիւնը, այսպէս են ասում.

Քանի օր առաջ Աղբալի Աբբաս-օղլի անուռով մի թուրք գալիս է մրգավաճառ պրն. Պետրոս Եղիազարեանին առաջարկում, թէ չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերը բազար չը դուրս գաք և տղորցդ էլ թոյլ չը տաս, որ գան պաղվալ (գինետուն), որովհետև մեծ վտանգ պիտի լինի: Այս լուրը հասնում է գաւառական կոմիտէի ականջը և դրա համար էլ ուզում էր հեռացնել հայերին բազարից: Հայերը կոմիտէի առաջարկուծիւնը ընդունեցին, բայց մի քանի ժամ յետոյ մերժեցին: Այդ արգիւնաբեր առաջարկուծիւնը մեր-

¹⁾ Պատմողից պարզ չ'իմացայ, թէ որոշեալ ժամանակից յետոյ պէտք է վերադառնային Շէյթան-բազարը, թէ մինչև յիշեալ ժամանակը պէտք է կամաց-կամաց քոչէին:

ժողների ղեկավարները մեր մամոնասէրներն են՝ Միքայէլ Սիւքիասեան, Ալէքսէյ Նազարեան, Գէորգ Սամարչեան, Յովհաննէս Տաւայեան և մի քանի ուրիշ անձինք, որոնց թուումն արհեստաւորներ և վաճառականներ: Մինչև անգամ արհեստաւոր վարպետը բարկացաւ իւր աշակերտի վրայ, ասելով, որ դու քեզ համար զբօսնելու ես գնում և ոչ թէ թուրքերից ազատելու համար: Ահա այսպէս մերժեց բարի առաջարկուծիւնը և կոմիտէն, յուսահատ, իւր ոյժերը յետ մղելով, թողեց Շէյթան-բազարը անպաշտպան:

Նոյեմբերի 14-ին, օրն հինգշաբթի, գնացի Շէյթան-բազարը և տեսայ որ թրքաց մէջ մեծ իրարանցում կայ: Հետաքրքրւելով մօտեցայ և տեսայ որ թուրքաց մօլլան քարոզում էր, իսկ անագին խուժանը կանգնած լսում էր այդ լրբաբարբառ լեզուի արտասանութիւնը: Ինքս ինձ մտածելով, մտայ խուժանի մէջ աներկիւղ, որովհետև թէ հազուստով և թէ լեզուով այնպէս էի, որ ոչ ոք թուրքերից չէր կարող նկատել, որ ես հայ եմ:

Ահն թէ ինչ էր քարոզում այդ անգամը. «Բաւական է ինչքան համբերեցինք, արդէն ժամանակն է վրէժինդիր լինել մեր մահմեդական ազգի կորստեան համար, ջնջենք այդ պիղծ հայերին»:

Ամբոխից հարցումներ եղան մոլլայից «Թէ երբ այդ սուրբ գործը կը սկսինք». Քարոզիչը պատասխանեց, որ վազը ուրբաթ է, որ

մարգարէն այդ օրը որոշել է սուրբ և մեր այս առաջարկութեան նպատակն էլ սուրբ լինելով, վաղը հէնց որ ես բարձրանամ մզկիթ , ազան՝ կանչելու, դուք անմիջապէս կը հարձակուէք հայերի վրայ: Այդ լսելուն պէս եկայ յայտնեցի հայերին, որ հեռանան բազարից, բայց ինձ չ'հաւատացին, մի քանիսն էլ հայհոյելով ինձ, մատնիչ, թալանչի անուանեցին, ասելով, որ մեր հարեան թուրքերը մեր վատը չեն կամենալ, հեռացիր մեր միջից և միւս անգամ չ'համարձակուես մեզ համար լուր բերել:

Ես հեռանալով եկայ բնակարանս: Միւս օրը նոյեմբերի 18-ին ուրբաթ առաւօտեան, գնացի Շէյթան-բազարի հայոց փոքրիկ եկեղեցին և այդ միջոցին լսեցի թուրքաց ազանի ձայնը. իսկոյն թուրքերը սկսեցին կոտորածը, թալանը և հրդեհը: Փողոց վազելով և բարձր ընկերներ գոռալով, ժողովեցի շուրջս մի քանի ընկերներ, նրանց ձեռքը տուեցի սեփական զէնքերից տասն հրացան և փամփուշտներ, որոնց համար վերջին կողպէկս դնելով, պատրաստել էի վտանգի առաջն առնելու համար:

Փոքրաթիւ գնդովս յարձակեցանք թուրքաց Չայու մահլայի վրայ, փշայնելով այդ մահլան և Մօլլաջէվին և վերադառնալով հայոց թաղը: Մօլլաջէվին աւերելու ժամանակ մէկ արտաքնոցից հանեցինք երկու թուրք տիկիներ և

չորս երեխաններ ու յանձնեցինք տեղապահ վարդապետին, որը միւս օրը ուղարկելով թուրքերին, փոխարէնը հետ ստացաւ տասն հոգի հայ զերիներ, որոնց ազատութիւնը եղաւ իմ արգար հատուցումս:

Իվան Բաղաշեանց:

Երեք օրից յետոյ, մօտ 85 հոգուց բաղկացած մի խումբ, ճանապարհ ընկանք դէպի Շուշի: Ուղեկիցներս ոմանք ժամանակը լրացած զինւորներ էին, ոմանք ընտանեաց պէտքերը հոգալու համար օտար երկիր գնացած պանդուխտներ: Լրագիրներից տեղեկութիւն ստանալով կատարուած դէպքերի մասին, ամենքս էլ շտապում էինք օր առաջ օգնութեան հասնել մեր անօգնական մնացած ընտանեաց:

Ժամանակը ձմեռ էր. ճանապարհը անցնում էր Գանձակու սարերով և անմատչելի անտառներով: Մեզանից որը ձիով, որը ոտով, որը առանց սաք հագուստի, որն էլ մինչև անգամ բոբիկ էին. մեծ դժուարութիւններ քաշելով վեց եօթ օրից յետոյ հասանք Շուշի, այն ինչ առաջ Եւլախից Շուշի մէկ օրուայ ճանապարհ էր: Այժմ յարգելի ընթերցող, թէ ինչ էր մեր դրութիւնը այդ ճանապարհորդութեան միջոցին, դու ինքդ դատիր: Ախր ինչո՞ւ այս սև գիրը միայն հայի ձակատին է գրած:

Մի օր մնալով Շուշի, երկրորդ օրը ճանա-

պարհ ընկայ իմ հայրենի Զարգանաշէն գիւղը: Ընտանիքս գտայ ողջ, բայց վնջ էն հալին, որ նրանցն էր. երեսներին գոյն ասես իսկի չկար: Քիչ հանգստանալուց յետոյ հարցրի գիւղի նորութիւնները. մայրս պատմեց, որ ներքին Թաղաւարթից մեր առնակից բարեկամ Գրիգոր Ալլաւերդեանցը, Սուլէյման Ալլահվերդեանցը և Բալասան Շահրիմանեանցը սորանից քանի ժամանակ առաջ գնացել են, Մալականի⁽¹⁾ բազարը ցորեն առնելու. այնտեղից անհետացել են թէ իրանք և թէ իրանց ձիերը: Գիւղացիք գնացել են որոնելու, բայց գիտիւները էլա չեն գտել:

Իմ հայրենիք գնալուցս ութ օր յետոյ Սարգսաշէն գիւղից երկու հոգի գնացին Ղաջարը ցորեն գնելու, բայց չվերադարձան. այդ օրը կիրակի էր: Երկուշաբթի նոցա յետևից գնացին մարգիկ իմանալու բանի որպիսութիւնը: Սոքա երբ հասնում են Ալի-իւզբաշուն հասարը^{*}), տեսնում են ճանապարհից բաժանուած մարգիկանց և ձիերի հետք. բռնելով այդ հետքը մեր ճամբորդները հասնում են Խաղաղի անտառը. այնտեղ սպիտակ ձեան վերայ տեսնում են արեան շերտեր. գիտի չեն գտնում, բայց արեան հետ-

1) Ղարարուղի:

*) Այս հասարը Ղարարաղի խոտերի ժամանակից մնացած մէկ կիսաւեր պարիսպ է:

քերը պարզ ցոյց են տալիս, որ այդտեղ մորթուած պիտի լինեն երկու հոգի: Արիւնից ոչ հետու գտնում են այնտեղ նահատակուած Սահակի ծոցից թափած թղթերը և ծխախոտի ամանը: Ահա մեր երկար տարիներէ ի վեր հաշտ հարեան Ղաջար գիւղացոյ անարգար վարմունքը: Ասեցէք խնդրեմ պիտի վրէժխնդիր լինել թէ ոչ:

ՄԻ ԶԸԶՈՒԻԵԼԻ ՏԵՍԱՐԱՆ ԵՒՍ

Մեր Զարգանաշէնի գիւղացոյ ապրուստի մեծ մասը գալիս է „Բէյջանլար“ անունով Ավառուիւների հողից, որովհետև յիշեալ հողի մէջ մենք ունինք սեփական թթենիներ, խաղողի բաղեր, այնտեղ են և մեր գոմերն, կալերն ու մարագները: Մեզ հետ սահմանակից և հարեան է յիշեալ Բէյջանլարից երեք վերստ դէպի արևելք գտնուած Ղաջար Թրքաբնակ գիւղը և այդ գիւղի բաղերը: Մեր գիւղացոյ տավարները ձմեռը անց են կացնում յիշեալ Բէյջանլարի գոմերում. Այդ գոմերը գտնուում են մեր գիւղից դէպի արևելք մօտ 10 վերստ հեռաւորութեան վրայ: Գիւղի հիւսիսային կողմով վեց վերստի չափ հեռուից հոսում է մէկ գետակ, որ անցնում է յիշեալ Ղաջարի միջով: Այս գետակի վերայ կան շատ ջրաղացներ. այդ ջրաղացներից մէկը պատկանում էր մեր Զարգանաշէն գիւղացի Կոստանդ Աբրահամեանցին, որի մասին պէտք է խօսենք:

Մեր գիւղացիք այս տարի իրանց տավար-

ներն չ'տարան յիշեալ գոմերը, որովհետև երկիրը կար Ղաջարի թուրքերից: Այնտեղի դարմանը և խոտը ձիով կամ արաբայով բերում էին գիւղ և այստեղ էին կերակրում կենդանիներին: Հասկանալի է, թէ ինչ դժուարութիւններ էին քաշում գիւղացիք, որովհետև ձմեռը ճանապարհները խիստ դժուար անցանելի են լինում գիւղ տեղերում: Մեր գիւղի մօտ հինգի չափ անձինք էլ գոմեր ունին Գոյգի անուանեալ բաղերի մէջ: Գոյգու բաղերի մէջ կայ մէկ աւերակ եկեղեցի, որ ուխտատեղի էլ է: Այդ եկեղեցու մօտ նոյն հողատէր Իլիկոյ բէկ Շահնազարեանցը շինել է մի երկու յարկանի տուն և բնակւում է այդտեղ: Այս բէկի տնից քիչ ներքև, ճանապարհի վերայ, գտնուում է Աղաջան Ավանէսեանի սրբանոցը (մասլաբոյնի): Մեր գիւղացի Ավակիմ Դանիէլեան Քոչարեանցի որդի Գրիգորը գոմշէ արաբայով Բէյջանլարից, դարմանը բերում է Քասի Քոխանց բաղումը գոմի¹⁾ մէջ պարպում և գոմէշները թուով եօթ հատ թողնում այդ գոմումը, դուռը կողպում և ինքը գալիս է տուն, որպէս զի երեկոյեան իւր ծնողաց հետ թաթախուի, որովհետև այդ օրը ջրօրհնեաց նախընթաց թաթախման օրն էր: Նոյն օրը տուն են գալիս Գոյգում բնակուող տավարապահները: Գոյգին մնում է առանց մարդ, դատարկ:

1) Այս գոմը գտնուում է յիշեալ Գոյգու գիւղից երեք վերստ հեռու:

Միւս օրը առաւօտեան ամենքս գնացինք եկեղեցի, որովհետև ջրօրհնէքի և մկրտութեան օրն էր. խաչը ջուրը պիտի ձգէին: Յիշեալ Քոչարեանցը եկեղեցու երեցփոխն է: Եկեղեցու մէջ աղօթքի ժամանակ յանկարծ լուր բերին մեզ, որ Քոչարեանցի եօթ հատ գոմէշները և Աղաջան Ավանէսեանի երեք հատ գոմէշները և Սոսորով Գրիգորեանցի նոյնպէս երեք հատ գոմէշները գիշերը թուրքերը եկել տարել են. դրանց յետևից է գնացել Գրիգոր Ավակիմեան Քոչարեանցը: Իսկոյն Ավակիմը օգնականներ խնդրեց ժողովրդից, որ գնայ հասնի իւր երեխի յետևից և յետ դարձնէ նորան. գոմէշներն տարել էին, գուցէ երեխին էլ մի փորձանք էր պատահել: Ավակիմի հետ ճանապարհ դրինք մօտ տասերկու երիտասարդ տղաներ, լաւ գինուած: Թող սորանք ճանապարհները շարունակեն գնալ, իսկ մենք դառնանք եկեղեցի խաչը ջուրը ձգելու, քանի որ մօտ երկու հազար տարի է, որ ամեն տարի յունվար ամսի վեցին այդ սուրբ տօնը կատարում ենք. իսկ այս տարի Վարանդայի մի քանի գիւղերում խաչը ջուրը չը ձգվեց քանի որ արեան մէջ էինք լողում:

Երբ ժամերգութիւնը վերջացաւ, դուրս եկանք եկեղեցուց և կտուրների վրայ խումբ խումբ կանգնած խորհուրդ էինք անում, թէ ինչպէս պէտք է այս դժբազդութեան առաջն անեն:

Մեր մէջ էր գտնուում Կոստանդ Սէինեան Աբրահամեանցը, հասակով քառասուն-վեց-քառասուն-եօթ տարեկան, մէկ ցակատ ձեռին բռնած: Ես հարցրի նորան „նրտեղ ես գնում“, նա պատասխանեց „գնում եմ Գոյգուայ Ղաղացը“. բոլորս միաբերան ասացինք. — Կոստանդ երեկոյեան անպատճառ դու և Առաքել աբօրը Գէորգը ձեր տավարները կամ ինչ որ այնտեղ ունէք, բոլորն առէք և քոչեցէք այստեղ. ինչպէս որ զիւզում եղած մարդիկ են ապրում, այնպէս էլ դուք կապրէք. այսուհետ զիւղից դուրս մնալը վտանգաւոր է:

— Շատ կարելի է Ղաղացումն էլ չմնամ, բոլորովին քոչեմ գամ. պատասխանեց Կոստանդը: Այս խօսակցութիւնից յետոյ սկսեցինք զարափաթ (հանաք) ևս անել:

— Կոստանդ ինչ՞ու թվանքդ չես վերցնում, որ երեկոյեան մեզ համար մի քանի որս բերես կաքաւ կամ նապաստակ, ասի ես.

— Այժմ ձուկ բռնելու ժամանակ է երեկոյեան ձուկ կբերեմ, եթէ ժամանակ ունենամ Ղուրը մտնելու. իսկ ինչ վերաբերում է որսի, թվանքիս կափսիլը կոտորուած է, ձգել եմ այնտեղ գոմը և եկել:

— Կոստանդ այսպիսի ժամանակներում ավստս է որսի համար վառօղ և գնտակ փչացնելը. մեզ որս պէտք չէ, զարափաթ ենք անում կրկնեցի ես:

Ես արձակեցի պատրոնդաշս և կապեցի Կոս-

տանդի վերայ, ատրճանակս էլ խրեցի գօտիկից: Ամեն կողմից ասացին, թէ լաւ սազում են նորան պատրոնդաշս ու ատրճանակս: Այստեղ Կոստանդը մի զարափաթ արաւ, ասելով — ձեզ յայտնի չէ որ ես եթէ մերկ էլ լինիմ էլի ինձ զէնքը կըսազի, եւ արգարև, իրաւացի էին Կոստանդի խօսքերը: Նա մի այնպիսի որսկան էր, որ գնդակը գնդակի տեղովը կանցկացնէր կրկնելով քանի անգամ: Յետոյ արձակեց ատրճանակս ու պատրոնդաշս և սուեց ինձ ասելով.

— Մի գուցէ պրիստաւի կոզակներին պատահեմ առնին ձեռքիցս, ափսոս է: Այժմ ես գնում եմ, մնաք բարով, գուցէ փորձանքի հանդիպենք ու էլ չտեսնենք իրար: Կարծես թէ նորա հոգին վկայում էր, թէ ինչ փորձանք է գալու իւր գլուխը:

Կոստանդը թող գնայ, իսկ մենք տեղեկութիւն տանք մեր ընթերցողին գոմէջների և Գրիգորի յետևից գնացողներից: Ավակիմ Քոչարեանցը իւր ուղեկից երիտասարդներով հասաւ Սարգսաշէն զիւղացոց գոմերը, որոնք գտնուում են յիշեալ „Ալի-իւղբաշուն հասարին“ կից, այնտեղից մտնում են անտառ և գնում են անտառի միջով բաժան-բաժան: Այստեղ Արիստակէս Գրիգորեանցը և Ավանէս Աղաջանեանցը նկատում են, որ Խազազ սարի գագաթին բազմաթիւ թուրք խուժան կայ կանգնած: Ինչպէս երևում էր այդ

խուժանը մտադիր էր գաղտագողի գալ, բռնոտել մեր փոքրաթիւ հայերին և չարաչար տանջանքներով նահատակել: Մեր տղերքը կամացուկ ձայնով իմաց են անում մէկգմէկու և վարպետութեամբ հեռանում են այդ տեղից: Երբ գալիս հասնում են մեր գոմերը, այնտեղից տեսնում են որ խաղաղ սարի վերայ մօտ երկու հարիւր հոգի թուրք զիրք բռնած կանգնած են: Ավակիմ Քոչարեանցը ասում է.

— Ես իմ երեխի պատճառով այսքան մարդի մահը չեմ մտնի. եկէք գնանք տուն. ինչ Աստուած կտայ-կտայ: Գալու ժամանակ ճանապարհին լուր են ստանում, թէ երեխան անփորձ եկել է տուն. Երբ իրանք հասնում են յիշեալ սրբանոցին, Ավանէս Աղաջանեանցը իւր հրացանը տալիս է իւր ազգական Պօղոս Յակովբեանցին հարիւր հատ փամփուշտի հետ, որպէս զի այդտեղ, սրանոցի մէջ, պաշտպանուեն: Արիստակէս Գրիգորեանցը իւր մեծ եղբայր Խոսրովին ասում է, որ երեկոյեան Առաքել ապուն Գէորգի հետ տավարները առնի և քոչվի գիւղը այստեղ չմնայ: Այնուհետև խումբը վերադառնում է գիւղ և պատմում մեզ այդ օրուայ անցքերը: Այժմ ամենիս համար պարզ էր, որ Ղաջարցիներից մեր գիւղի գլխին մեծամեծ փորձանքներ պիտի գային:

Կոստանդին Աբրահամեանցը չի կարողանում երեկոյեան քոչուիլ գիւղ. ուստի իւր եղբայր

Ալէքսանին ուղարկում է տուն պատուիրելով, որ սա գնայ „բէրգեանկա“ հրացանը և մի յիսուն հատ փամփուշտ բերի, որպէս զի այդ գիշեր այդտեղ մնան և միւս օրը քոչուին գիւղ: Ալէքսանը գալիս է տուն, տեսնում է, որ իւր աներձազը, որ ուրիշ գիւղացի էր, իրանց հետ է եկել ու երեկոյեան էլ չի վերադառնում Կոստանդի մօտ. Կոստանդը մնում է առանց հրացանի: Կոստանդի հետ է լինում իւր ութ տարեկան որդի Աղաջանը: Տեսնելով, որ Ալէքսանը չի վերադառնում, նոքա սկսում են անհանգիստ լինել:

— Արդէն մթնեցաւ, ասում է երեխան հօրը, ապա Ալէքսան ամին չի եկաւ:

— Մի վախենալ որդի, կրգայ, չի մնայ:

Քիչ մնալուց յետոյ երեխան կրկին ասում է:

— Ապա ամին չեկաւ, արի մտնենք գոմը և դուռը պինդ կողպենք յետևից. վախենում եմ որովհետև սիրտս այնպէս է վկայում, որ այս գիշեր թուրքերը պիտի գան մեզ սպանեն և մեր տավարները տանեն. ախ, Ալէքսան ամի, ինչո՞ւ չեկար և թֆանքը չըբերի, որ թուրքերից չվախենայինք:

— Մի վախենալ քեզ մատաղ, ոչինչ չի լինի. թուրքերը երկու գիշեր իրար վրայ չեն գայ, մեզանից կ'վախենան, սիրտ էր տալիս հայրը. թէև երեխին սիրտ էր տալիս, բայց ինքը ևս յոյս չունէր անփորձ վաղուան հասնելու:

15/6
44



Թող սրանք այս մտատանջութեան մէջ դուռը կողպեն և սպասեն իրանց համար եկող փորձանքին, իսկ մենք խօսենք Գէորգ Առաքելեան Գրիգորեանցի մասին: Գէորգն ունի ծերունի հայր և (երկրորդ) խորթ մայր. այս երկրորդ մօրից ունի մի քանի մանր եղբայրներ, որոնցից ամենից մեծը գտնուում էր Գէորգի մօտ Գոյգուայ գոմումը: Սորա անունը Մուխան էր և ինքը իննը ամաց: Գէորգը արգէն հինգ-վեց տարուայ պսակուած իրիտասարդ էր: Ապրուստի կողմից խիստ դժուարութիւն էին քաշում. նոցա բոլոր ունեցածը այս մի քանի գլուխ տավարներն ու էշերն էին, որոնց այստեղ պահում էին: Իլիկոյբէկ Շահնազարեանցը ստիպում է Գէորգին քոչել գիւղը:

— Կամ թէ չէ, եթէ չի կամենում գիւղ գնալ, գոմի դուռը կողպի, երեխին վերցնի և գայ գիշերը իրանց մօտ մնայ. մի գուցէ գիշերը փորձանք պատահի:

— Այդ եթէ որ գողերը գան, ասում է Գէորգը, իմ տավարներս տանեն, լաւ է ինձ էլ սպանեն, քան թէ սաղ մնամ, որովհետեւ իմ ապրուստս այս տավարներովս է: Այսպէս Գէորգը մերժում է և մնում է գիշերն իւր գոմում:

Յունվարի 6-ն էր. արևը մայր մտաւ. ամեն մարդ մտաւ իւր տունը, բացի գիշերապահներից:

Սոցա խստիւ պատուիրել էինք, որ զգոյշ լինեն և լաւ հսկեն գիւղի չորս կողմերը, որովհետեւ ամեն ըսպէ սպասում էր արձակում: Իհարկէ մենակ մեր գիւղը չէր այդպիսի երկիւղի մէջ, այլ ամբողջ Վարանդայի գիւղարանքը: Այս ուրախութեան օրերին մեր երկիրը արեան մէջ էր լողում: Հաց կերանք թէ չէ մտանք անկողին և դեռ նոր էի քուն մտել, մէկ էլ տեսայ, որ աղջիկ երեխաներս ինձ շարժում են և ասում. «հայրիկ ել տեղէդ»: Ես զարթեցայ և հարցուցի ինչ կայ, ինչ կուզէք: Այդ միջոցին իմ ականջին հասաւ եկեղեցու զանգի ձայնը. ես չէի իմանում թէ ինչ է նշանակում այս:

— Ինչո՞ւ համար են զանգակը այդպէս ծեծում, չլինի՞ թէ լուսնեակը խաւարել է, հարցրի ես, որովհետեւ ըստ աւանդութեան լուսնեակը խաւարելու ժամանակ այդպէս զանգակներ էին ծեծում: Բոլոր տնայիւններս արտասուախառն աչօք և դողդոջիւն ձայնով պատասխանեցին.

— Այդպէս պատուիրուած է գիշերապահներին, որ ինչ ժամանակ փորձանք պատահի, զանգակները ծեծեն, որպէս զի գիւղացիք ոտքի ելնեն և թշնամու դէմ գնան:

Այս լսելուն պէս, ես իսկոյն դուրս թռայ. ես և եղբայրս վազեցինք տեսանք, որ ամբողջ գիւղը մարդ, կին, ծեր, երեխայ բոլորը ոտքի էին ելած. գիւղը մի սարսափելի դղրդիւնի մէջ

էր: Սարէն խուժից մի ձայն էր գալիս:

— Օգնեցէք, շուտ հասէք, Գոգուայ մարդոցը սպանեցին և տավարները բոլորը քշեցին տարան, „Օգնեցէք“ ձայնը անդադար կրկնուում էր Այս դառն լուրը լսելով, սկսեցին լալ եւ աղաղակել: „հասէք ազատեցէք Գոգուայ բնակիւողներին“: Բայց արդեօք կենդանի՞ էին դեռ խեղճ ողորմելիները, որ ազատենք չար թշնամու սրից: Դժուար թէ:

Չնայելով որ ամբողջ գիւղով գնացած էին օգնութեան, բայց Ղազար Ղահրամանեանցը, Մովսէս Ղահրամանեանցը, Իսրայէլ Գաբրիէլեանցը, Արիստակէս Գրիգորեանցը, Ղազար Գրիգորեանցը Գէորգի քանի տարի առաջ իրանից բաժանուած եղբայրը Կոստանդի երեք եղբայրները գնում են այնպիսի ձանապարհով, որ կարողանան թշնամու առաջը կըտրել: Օգնութեան էին եկել և Ներքին-թաղավարից և Սարգսաշէն գիւղից, բայց իգուր-թշնամին իւր անելիքը արել էր:

Թող օգնութեան գնացողները գնան իրանց ձանապարհը, իսկ մենք ծանուցում տանք մեր յարգելի ընթերցողին, թէ ինչպէս անցաւ յիշեալ երկու անձանց, Կոստանդի և Գէորգի դրութիւնը:

Մօտաւորապէս գիշերուայ ժամը տասերկուսին Կոստանդ Աբրահամեանցը լսում է մի զարհուրելի ձայն, որ դրսից հրամայում է բանալ դուռը: Կոստանդը ամբողջ մարմնով ցնցւում է

և ինչ անելը չի իմանում: Չայնը կրկնուում է. Կոստանդը մտածում է մի հնար գտնել ազատելու թէ իրան, թէ երեխին և թէ տավարը: Միտն է գալիս, որ գոմի արևելեան կողմում կայ մէկ դուռ չոր քարով ամրացրած աշխատում է ձեռքով քանդիլ այդ դուռը, որ դուրս գալով այդ տեղից փախչի հարայ տայ սրանոցի մարդկանցը, բայց երբ հասնում է դրսի հողին, էլ չի կարողանում քանդիլ, որովհետև ցրտից սառած է լինում հողը: Թուրքերը տեսնելով որ դուռը չի բաց անում և դուռը էլ բաւական ամուր է, և չի կարելի կտորել, բարձրանում են կտուրը և սկսում են քանդել: Բուխարիկի օջախի կողքից, ուր կրակի տաքութեան պատճառով հողը սառած չի լինում, հեշտութեամբ քանդում են և բաց են անում մի ծակ. կախուելով մտնում են ներս ու դուռը ներսից բաց են անում: Յետոյ բոլորը մտնում են ներս, բռնում են Կոստանդին, մէկը հանում է սուր խանչալը և կտրում է ողորմելու ականջները ու գնում իւր շէքը: Երեվի տանի իրանց պաշտածներուն կերակուր: Յետոյ սկսում են սաստիկ ծեծել, դուռը չը բաց անելու համար, ապա եզ, կով, էջ գոմէջ, պղնձեղէն, հանում են դուրս, բարձում էշերին, Կոստանդին ու երեխին հեաներն առնում ու գնում. անցնելով մեր Նազլանց բաղի միջով հասնում են այն գոմին, ուր Գէորգ Առաքելեանը իւր քնի մէջ ընկղմած, ե-

րագներ է տեսնում զանազան. Աւագակները թուով եօթը հոգի էին, զինւած հրացաններով, խանչարներով և ատրճանակներով: Երբ մօտենում են գոմին հարցնում են Կոստանդից.

— Ով կայ այս գոմի մէջ, կամ անունն ինչ է:

— Գէորգը, պատասխանում է Կոստանդը:

— Հապա ձայն տուր, որ դուռը բանայ, թեզ, սոյեադոր. Ինչ անէր Կոստանդը, միթէ կարող էր ընդիմանալ այդ արիւնարբու գազաններին և ձայն չտալ Գէորգին կամ թէ ասիլ— «Գէորգ աչքդ լոյս, անա գալիս են ծիրանի պսակը վզիցդ կապելու մեր նախնի պսակուողներու պէս»: Նաչըհամաձարկուեց ձայն չտալ. ուստի ահամայ սրտով կանչեց:

— Գէորգ դուռը բաց:

Յանկարծ Գէորգը զարթեցաւ և ձայն տուեցներսից.

— Ինչ կայ, բէյվախ եկել ես, Կոստի ապա:

Ապա խօսեց աւագակներից մէկը հայերէն լեզուով:

— Գէորգ դուռը բաց, մրսած ենք, պտի տաքանանք: Կարծես Գէորգին ծանօթ էր այս ձայնը. իրենց զօրուղչի Մանսուրի գարշելի ձայնն էր այդ: Գէորգը միամիտ տղայ էր, բայց այդպէս չէր Կոստանդը, եթէ ունենար իւր մօտ մէկ փոքր ատրճանակ, նա թոյլ չէր տայ, որ աւագակները ներս մտնեն. ներսից բոլորին մէկ մէկ կը կոտորէր: Բայց ինչ արած, որ ողորմելու ձեռքը ոչ մի բան չկար և անձնատուր եղաւ ոչխարի պէս մորթուելու: Այդ

աւելի իշխանութեան մեղքն էր, որ եթէ մէկ հայի ձեռք ատրճանակ կամ մինչև անգամ դանակ էր տեսնում, իսկոյն առնում էր ձեռից, իսկ թուրքի համար զէնք կրելը բոլորովին ազատ էր:

Յանկարծ Գէորգը բացեց գոմի դուռը և ինչ տեսարան բացուեցաւ նորա աչքի առաջ: Եօթ թուրք սպառազինուած հրացաններով, ատրճանակներով, պատրոնդաշները աջ ու ձախ ուսերովը զցած, մերկ խանչալները ձեռները բռնած, աչքները գազանական կրակով լցուած, կանգնած էին ինչպէս հոգեհան սատանաներ: Նոքա շատ լաւ գիտէին, որ խեղճ Գէորգը թրքերէն խօսիլ չգիտէ, ուստի սկսեցին հայերէն խօսիլ:

— Գէորգ ո՞ւր են հաւերդ:

— Ահա այդ բնի մէջ են:

— Մէկ հատ կըտան մորթենք:

— Դուք պիտի ինձ տաք և ոչ թէ ես ձեզ. այստե՛հետե հաւերն էլ ձերն են, նոցա իրաւունքն էլ պատասխանեց Գէորգը կիսամեռ ձայնով:

Թէ ինչպիսի սրտով էր Գէորգի այս ահամայ պատասխանը, այդ միայն Աստուած գիտէ, քանի որ Գէորգը չէր զըմիշ անում մէկ հաւկիթ (ձու) անգամ ինքը ուտելու, այլ բերում էր տուն որ իրանց տան համար ճրագի իւր կամ իւր ծերունի հօր համար շայ ու շաքար առնուէր այդ հաւկիթներով: Եւ տեսէք ինչպիսի նեղ դրութեան մէջ էր այժմ, որ յիսունի շափ հաւերն բոլորը

յանձնում էր անօրէններուն: Խօսեց Մորուսէինը,
որ մեր Առաքել Բաղդասարեանցի հետ „դին
այրի զարդաշ“ էր՝ եղած և մինչև այդ աղէտը մէկզ-
մէկու հետ սիրալիր բարեկամութիւն էին անում:

— Գէորգ, առաջ մէկ հատ եռամուրթայ¹⁾ չէիր
տալ, հիմի տես որքան զօրութիւն ունին սորանց,
որ բոլոր ունեցածդ մեզ ես յանձնում, բարձրացընե-
լով մերկ սուրերը ասացին թուրքերը. Գէորգ²⁾
արի մեզպէս թուրք եղիր և մեր մէջ ապրիր, մեր
կրօնը լաւ է: Գէորգը պատասխանում է. ես չեմ
ուզում ձեր կրօնը, մերն էլ ինձ համար է լաւ. դուք
թուրք կացէք, մենք էլ հայ: Բայց ջեյլի արէք
գնացէք որ դուռը կողպեմ քունս տանում է:

— Գէորգ, բիր խուրջին չունիս, որ այս մորթած
հաւերը լքցնենք մէջը, խօսեց զօրուխչի Մանսուրը:

— Բա խէ չկայ առէք, ահա խուրջինը: Խուր-
ջինը առան և բոլոր մորթած հաւերը լքցրին
մէջը: Ինչ կայ. մեր անկոչ հիւրերը չէին վա-
զում, որովհետև գիշերը երկար էր և իրանց էլ
յայտնի էր, որ ոչ մի տեղից իմացող և օգնու-
թեան եկող չալիտի լինի:

— Շուտ արէք, ինչ որ ստանալու էք, ստացէք
գնացէք, կրկնեց Գէորգը:

Իսկ խորագէտ օձից գիտուն Կոստանգը լուռ ու
մունջ կանգնած էր և գիտում էր խօսակցու-

1) Հաւիթ:

2) Թուրքերը ծագր են անում Գէորգին

թիւնը, չնայելով, որ կտրուած ականջներից արիւ-
նը այնքան էր վազել, որ արիւնաքամ էր եղել:
— Քունդ կտանի:

— Մի թալասիլ Գէորգ, ասաց Մորուսէինը ինչո՞ւ
չես ուզում այս աշխարհում մէկ սրհաթ աւելի զար-
թուն մնալ: Ել տեղէդ և տավարների գոմի դուռը
բաց. այնուհետև քեզ այնպէս քուն անենք, որ
մինչև ձեր պաշտած, Քրիստոսի գալ-զարթեցնելը
դու քուն լինես:

Գէորգը վեր կացաւ տեղից, առաւ բանալին
և աշխատեց գոմի դուռը բանալ, որ անցնում էր
տան միջով իւր պառկած կառավարի մօտ: Բայց
դուռը շատ դժուար բացուեց, որովհետև բանա-
լին կտարուած էր: Թուրքերը չ'համբերելով, սա-
քով խփեցին և դրան տախտակները ջարգեցին:
Գէորգը բարկացաւ. ինչո՞ւ էք փչացնում դուռը
ասաւ նա, վերջը իրան տիրոջը հարկաւոր կլինի
և եկաւ նստեց իւր կառուարի վերայ և սկսեց
ինքն իրան մի ինչ որ բան մըմնջալ: Ոհ, այս-
պիսի տեսարանի առաջ ինչ վիճակի մէջ էին
այն երկու մանուկները, Աղաջանը ու Մուխանը,
քանզի այս բոլորը նոցա աչքի առաջ էր կա-
տարուում. Կոստանդն էլ լուռ ու մունջ հէնց այս
երեխաների մասին էր մտածում. նա մտածում
էր ինչ հնարքով այս անմեղ աղաւենաց ձագերը
ազատէ անգութ ուրուրների սուր ճանկերից:
Մէկ նայում էր աւազակների մերկ սուրերուն և

մէկ էլ երեխաների վրայ — հոգին կսկծում էր; բայց ի՞նչ արած, ոչ մի հնար չկար: Ախ, ուր էք պահապան հրեշտակներ, այս երեխաներին էլա խղճացէք վեր քաշեցէք երդիկով և ազատեցէք: Այսպիսի մտատանջութեան մէջ էր խեղճ Կոստանդը: Աւազակները գոմի մէջ եղած տավարները և երկու էշերը դուրս հանելով, սկսեցին ժողովել մնացած իրեղէնները պղնձեղէն, ալուր, ցորեն, ինչ որ կար մինչև անգամ Գէորգի հագուստները. բոլորը բարձեցին ձիերի և էշերի վերայ և իրանք մօտեցան կրկին Գէորգին, որի վերայ միայն վարտիկ շապիկ էին թողել:

— Գէորգ, ինչո՞ւ բարկացար, միթէ դու չես վախենում մեր այս մահացու սրերից, ասացին նրանք: — Ինչու պէտք է վախենամ, ինձ ի՞նչ էք անելու, պատասխանեց Գէորգը:

Մորուսէինը մօտեցաւ Գէորգին և բռնելով ծնօտից, վեր բարձրացրեց. Մանսուրն էլ սուր խանչալը քաշելով այնպէս խրեց նորա կողորդը, որ քիչ մնաց գլուխը վզից բաժանէր. երրորդը փորը ձեղքեց և ստամոքսն ու աղիքը վայր թափեց, չորրորդը էլ խանչալով ձախ կողը ձեղքեց, հինգերորդն էլ մի ականջի կէսն էր կտրել: Այսպէս եօթ աւազակները ամեն մէկը մէկ վէրք էր հասցրել Գէորգին: Երբ Գէորգի Գլուխը կտրում են և այս վիրջինս գեանի վրայ ընկած խոխոացնում է, Մանսուրն ասում է.

— Ինչպէս է, Գէորգ, սիրո՞ւ չէիր անում, որ հասա մէկ չափ աւելի ցորեն տաս, դէ, հիմի կեր: Այս տեսարանը Կոստանդին ծանուցում տուեց, որ ինքն էլ միևնոյն կարմիր պսակով պիտի պսակուի, մեր նախնեաց մարտիրոսների պէս. ուստի թուրքաց լեզուով սկսեց աղաչիլ.

— Ինձ քաջ յայտնի է, որ ինձ էլ պէտք է այդ օրին հասցնէք. միայն խնդրում եմ, որ այս մանուկներին չսպանէք, թողէք նրանց կենդանի: Բացի դրանից, ինձ իմ երեխի առաջ չմորթէք, այլ այսպէս ողջ տարէք. ձեր հետ, յետոյ ինչ կուզէք, այն արէք: Ձեր Ալու գլխի խաթեր, այս իմ խնդիրս կատարեցէք: Ալու անունը լսելուն պէս թուրքերը յօժարուեցան կատարելու նրա խնդիրքը: Սուր գողացնելով մանուկների վրա ասացին.

— Տեսէք, ձեզ չենք սպանում, դուք ձեր տրեխյները հագէք ու այստեղ այնքան նստէք, որ լուսանայ. յետոյ այս աչքալուսանքը տարէք ձեր ծնողներին. մենք դուրսը կանգնած պէտք է լինենք, եթէ չլուսացած դուրս գաք, ձեզ էլ կսպանենք:

Կոստանդը երեխաներին ասաց, դուք այստեղ կացէք, եք այս աշնաներին քօմակ անեմ, տավարները քշեմ, ճանապարհ հասցնեմ, էլի կգամ: Այս ասելով համբուրեց երեխաներին ու կամենում էր հեռանալ. Իւր որդի Աղաջանը ասաց.

— Ապա, դու մի գնա՛. ցուրտ է. քո ականջները

էլ կտրած. կմբսիս, կսառչիս. մի՛ գնալ: Բայց ափ-
սոս, որ Կոստանդը իրաւունք չունէր չգնալու: Այս-
տեղ երեխան հասկացաւ, որ այդ վճռուած է և
ինքն վերջնականապէս պիտի բաժանուի հօր տե-
սուլթիւնեց, սկսեց այսպէս ողբ ասիլ.

(Գ Ո Ի Շ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն)

Որդին. Ասա, հայրիկ, ո՛ւր ես գնում.
Աղաչում եմ. յետ դարձիր,
Թողնելով մեզ այս մուլթ տընում
Աղաչում եմ, յետ դարձիր:

Հայրը Մի լար, որդիս, տավարները
Քշեմ ճամպան յետ դառնամ.
Ձեզ համար է մուլթ տները,
Ճամպան ձգիմ յետ դառնամ:

Որդին. Սրտերէս արիւն է բղխում
Աչքներս մուլթ կոխում,
Միթէ թուրքերից չես վախում.
Աղաչում եմ, յետ դարձիր:

Հայրը. Թուրքը ինձի չի սպանիլ,
Գէորգին պէս չի անիլ,
Մեր աշնան է զիս չի տանիլ,
Ճամպան ձգիմ յետ դառնամ:

Որդին: Ով պէտք է լինի ընկերդ,
Կտրաուած ալանջներդ,
Ձեմ մոռանալ քո ցաւերդ,
Աղաչում եմ, յետ դարձիր:

Հայրը. Թուրքունին սպասում է,
Մեր թևերս տանին նուէր.
Վերադ ունիմ հայրական սէր,
Ճամպան ձգիմ, յետ դառնամ:

Որդին. Ես քո զաջին եմ ուլթ ամաց,
Ողբում ես աչքերդ թաց,
Կըբաժանուիս կամաց-կամաց
Աղաչում եմ, յետ դարձիր:

Հայրը. Կոստանդն եմ, ունիմ խնդիր
Նղբայրներս քաջ, ընտիր,
Ասա, լինեն վրէժխնդիր:
Ճամբան ձգիմ յետ դառնամ:

Կոստանդը վերջին համբոյրը տալով երեխա-
ներին, թողեց նոցա անմխիթար արտասուքի մէջ
և հեռացաւ: Այստեղ երեխաները սկսեցին լալ
և ողբալ: Մտածեցին, որ անհնարին է բազմա-
վէրք, մարտիրոսացած Գէորգի զիակի մօտ մնալ:
այլ դուրս եկան անից: Հեռուից տեսան, որ Կոս-
տանդը գլխաբաց, առանց հագուստի շապիկ վար-
տիկով, ոտաբոբիկ չորս կողմից շրջապատուած
սպառազէն թուրքերով, քշում է տավարը: Գլուխ-
ները քարշ ձգած մեր անտէր մանուկները Ծա-
ռերի միջով ճանապարհ ընկնելով հասան յիշեալ
սըրանոցի դրանը և կիսամեռ ձայնով ձայն տուին.
— Պօղոս ապա, դուռը բացէք, մեզ ներս առէք,
վախենում ենք:
Դուռը առանց բանալու ներսեց ձայն տուին:

— Ինչից էք վախենում, այս վախտ ինչ էք անում այստեղ.

— Թուրքերը եկան, պատասխանեցին մանուկները, Գէորդ ապուն մորթեցին, Կոստի ապուն և բոլոր տավարները քշեցին տարան: Ներսից կրկին դուռը չբացին, այլ զգուշութեան համար հարցրին երեխաներին.

— Գուցէ թուրքեր կան ձեզ մօտ կանգնած. ճամարիտ ասացէք, սովքեր կան ձեզ մօտ:

— Ոչ ոք չկայ, միք վախենալ, դուռը բացէք, ցուրտ է, կմրսենք:

Մինչև դուռը բանան երեխաներին ներս առնեն ու կրկին կողպեն, սրանոցի պատուհանից երկու անգամ հրացան են արձակում, որ իմանան թշնամին մօտ է, թէ ոչ. երբ ատենում են, որ հրացանին պատասխան չկայ, բաց են անում դուռը. Սըրանոցի գոմէշ քշող Մանաս Խաչատրեանը դուրս վազելով բարձրանում է յիշեալ սարէն խութից և սկսում է գիւղացիներին օգնութեան կանչել:

Ահա այս Մանասի ձայնն էր, որ գիշերը լսուեցաւ գիւղում և սկսեցին զանգակները ծեծել: Այս մասին թերթերում էլ կայ գրուած:

Սօսենք մեր գիւղից օգնութեան գնացողներից: Այն անձինք, որոնք գնացել էին թուրքերի առաջը կտրելու, հասնելով պրղերէն բաղի ետևագանք, բռնում են զիրք և սպասում են

թուրքերի գալուն, բայց զուր. թուրքերը արդէն անցել էին, հասել իրանց դիրքը, որ գտնուում է Ղաջարի գաւառումը, Սարգսաշէն գիւղացոց գոմերի մօտ և այնտեղից հրացան էին արձակում ղէպի մեր կողմը: Մեր թիկնապահները տեսնելով, որ թշնամիները անց են կացել իրանց սահմանը, յուսահատուած յետ են դառնում. Արդէն լուսանում էր: Ճանապարհին գտնում են Կոստանդի դիակը Մելիք-Շահնազարեանցի աւերակ Ղաղացի մօտ, Կոստանդի իւր սեփական ջաղացից քիչ հեռու: Այդտեղ անօրէնները ողորմելուն ձգել են ջրի մէջ, թրջել են ամբողջ անձը, կտրել են երկու թևերը, արմունկները և ախանջների պէս իրենց հետ տարել: Ջրօրհնեաց ցուրտ եղանակը պաղեցրել էր նորա մարմինը. թող նրանք այդ անմեղ դիակը առնեն բերեն, իսկ մենք գնանք, տեսնենք, թէ Գէորդը ինչ վիճակի մէջ էր:

Գիւղին մօտիկ լինելու պատճառով, գիւղի մէջ չէր մնացեյ մարդ թէ կին. բոլորը թափուել էին Գէորդի գոմի չորս կողմը լցուել, այնպէս որ ծերունի Առաքել Գրիգորեանը ճանապարհ չէր գտնում, որ իւր որդի Գէորդի արիւնաշաղաղ դիակին մօտենալ. Ամենքս տեղեկութիւն էինք իմանում կիսամեռ մանուկներից, որոնք յաւիտեան չ'պիտի մոռանան այդ ղէպը. մինչև որ իրանց ձեռքով չ'հասնեն կորցրած գոհերի վրէժը:

Յարգելիներ, ասացէք, պէտք է վրէժխնդիր

լինել, թէ ոչ: Գէորգի աչքերը բաց էին մնացել մորթուած տեղը, և ամեն մէկ աչքի փոսի մէջ մի-մի արտասուք. կարծես այդ արտասուքի կաթիլները ասում էին մեզ ամենիս:

— Վրէժխնդիր եղէք Ղաջարից և Դիլաղարուից և առէք մեր արեան վրէժը:

Շատ դժուար է այդպիսի տխուր դէպքերի ժամանակ. մարդ ինքն իրան քաղցած լինելը անգամ չի մտաբերում:

Լաւ չեմ յիշում, թէ յունվարի եօթից քանի օր յետոյ էր, որ մենք դիմեցինք թշնամուց վրէժ առնել. կամ նրանց գազանային խումբը ցրել:

Վարանդայի մի քանի գիւղերում հետզհետէ շարունակում էր տխուր դէպքեր, ինչպէս Զարդանաշէնում պատահած դէպքը: Յանկարծ լուր տարածւեց, որ Ամարասու հողին սահմանակից թրքաբնակ Ղաջար գիւղում շրջակայ թարաքեամաներից, այսինքն Դիլաղարդա, Վէյսուլլու, Զեարգեար, Երզրսովանդ և Ղուրբանդ գիւղերից ժողոված են մեծ քանակութեամբ թուրք խուժան, վարանդայի հայ գիւղերը փչացնելու համար: Այդ անօրէնների չար միտքը յայտնեցինք հայաբնակ գիւղերին, մէկ տեղ ժողովեցինք Ղաջարի վրայ յարձակուելու համար, ցրիւ տալու բարբարոս խմբերը և վրէժխնդիր լինելու յիշեալ գոհերի համար:

Երիտասարդների մի խումբ ճանապարհ ընկաւ երեկոյեան դէպի թշնամու բանակը, Բեր-

դաձորեցի մի մամոնասէր երիտասարդի հրամանատարութեամբ, որի անունն Ասլան էր (Իսրայէլ-բէկ): Ամբողջ գիշերը ճանապարհ կտրելով մեծ նեղութեամբ հասան Ղաջար գիւղը և լուսաբացին շրջապատելով գիւղը, դիրքեր բռնեցին:

Ղաջարեցիք պատրաստութիւն էին տեսնում յարձակուելու հայ գիւղերի վրայ, աւերելու և թալանելու, բայց չէին իմանում, որ իրենց անցկենալու ճանապարհը կտրուած էր և թակարդը լարուած:

Մեր հմուտ որսկան գիրքապահները տեսնելով թուրքերի շարժումը, սկսեցին հրացանաձգութիւնը և հրդեհը: Թուրքերը շփոթուելով, չ'կարողացան դիմադրել, շատերը փախան մտան թուխմըշարները¹⁾, ոմանք էլ դիմադրեցին, մի քանիսներն էլ այրուեցան հրդեհի մէջ. (անգէն փախչողներին հրամայուած էր չ'խփել): Դիմադրող թուրքերը կուռում էին Թափաուղ իւզբաշու տնից, որոնք պատերը ծակոտելով առաջուց դիրք էին մտած: Գնդակները թափուում էր կարկտի պէս. կուռում վերաւորուեց ականջից Զարդանաշէնաց թէվան Պօղոսեանցը, որը սիրտ դնելով ընկերներին, ասում էր. «քաջի պէս կուռեցէք, քաջի

1) Թխմշար կոչուում է վայրի թթենիների անտառը, որի տերևներով կերակրում են շերամի որդերին. այսպիսի թթենիներով շրջապատուած է Ղաջարը անգին տարածութեամբ:

պէս մեռնենք, կամ յաղթենք: Երանի թէ կուռի
դեկավարը թէվանի պէս այսպէս ազգասէր լինէր
և ոչ թէ թալանասէր, այն ժամանակ այնքան
աշխատութիւնները զուր տեղը չէր կորչել . .

Օրը պարզ էր. երկնքի երեսին չկար մէկ
ամպի կտոր: Ղաջարը գտնուում է հայ գիւղօրայքի
արևելեան կողմում և ունի ինն հարիւր տուն
բնակիչ: Հրդեհի և հրացանաձգութեան մուխը
այնպէս էր լցուել օդը, որ արեգակի առաջն
բոլորովին փակել էր:


Հայերի այս յաջող կուռի ժամանակ թուր-
քերին օգնութեան հասան յիսունից աւելի կա-
զակներ (վերջում միայն իմացուեց, որ կազակ-
ներ չէին, այլ կազակների շորերով թուրքեր):
Հրամանատարը-Անլանը առանց իմանալու թէ ով-
քեր են օգնութեան եկողները, հրաման է արձա-
կում յետ դառնալ, ասելով, որ կառավարութիւնն է
օգնութիւն ուղարկողը: Հայերը դուրս գալով դիր-
քերից սկսեցին փախչել, տալով տասի չափ զո-
հեր: Թուրքերը տեսնելով հայերի փախուստը,
ընկնում են նրանց յետևից, անշագար կրակելով
Սարգսաշէն գիւղի գոմերն ու մարագները հա-
րիւրի չափ, Բէյջանլարում գտնուող Զարգանա-
շէն գիւղի մարագները և խոտադէգերը, Շէյխեր
գիւղացոցը նոյնպէս, մինչև հասնում են Շէյխեր
գիւղին, որը ուզում են կրակել: Գիւղացիք վա-
զուց էին տեղափոխուած մօտակայ մեծ գիւղերը

Թաղար, Թաղավարդ և Զարգանաշէն, բայց գիւղը
պաշտպանում էին մի քանի երիտասարդներ, որոնք
նկատելով որ եկողները կազակներ չեն, այլ թուր-
քեր, սկսում են կրակել. դրանց մէջ ամէնից
աւելի աչքի էր ընկնում իւր քաջութեամբ Սա-
քօն, որը ծառերի միջից դիրք մտած, աջ ու ձախ
գլորում էր թուրքերին ձիերից: Տեսնելով, որ իզուր
է անցնում իրանց չարչարանքները, թուրքերը
ստիպուած եղան յետ փախչել, թողնելով տաս-
նորսի չափ դիակներ շրջակայ դաշտերում փո-
ուած: Այսպէս վերջ ունեցաւ Ղաջարի դէպքը:
Կեցցէն, ուրեմն Սաքօն և քաջ երիտասարդները,
Կեցցէ՛ Սիւնեաց Սրբախը, որ ծնեց անվեհեր
հերոսներ:

Գ Ա Գ Ի Կ.



Handwritten signature or note in Armenian script, partially obscured and faint.



7655

Handwritten signature

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1411813

